<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱՍԱՐԻ Բ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

Էլ. փոստ tsovasar@schools.am ел. Почта tsovasar@schools.am

Գյուղ Ծովասար N150

02.06.2022թ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Կ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Սեծարգո պարոն մարզպետ

Ի լրումն 30.05.2022թ. N148 գրության տեղեկացնում ենք Ձեզ,որ <<Հայաստանի Հանրապետության-Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը 2022թ մայիսի 26-ին կայացաց N 5 նիստում որոշում է ընդունել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր աշխատատեղի համար հայտարարել մրցույթ:

Կից ներկայացնում եմ վերոնշյալ նիստի արձանագրության քաղվածքը և մրցույթի հայտարարության տեքստը:

Ն դիր 3 (երեք) էջ:

Հարգանքներով՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ և Ծակքարի միջնակարգ դպրոցների կառավարման խորհրդի նախագահ՝ Ռ.Մանասյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2022 մայիսի 26 –ին կայացած N 5 նիստի՝ նախագահությամբ Ռ.Մանասյանի քարտուղարությամբ Վ.Գաբրիելյանի:

Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամներից 6-ը 3 –ը հարգելի պատճառներով բացակա էին:

Օրակարգում

1.,,Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց,, ՊՈԱԿ –ի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի հայտարարությունը :

Զեկ. կառավարման խ/ն՝ Ռ.Մանասյան

Լսեցին1.1,, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց,, ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտնելու մասին զեկուցող խորհրդի նախագահ Ռ.Մանասյանի հաղորդումը:Նա խորհրդին զեկուցեց ,որ երկարաձգված ժամանակահատվածում դիմորդներ չեն եղել, ուստի, համաձայան ՀՀ կառավարության 2010թ մարտի 4-ի N319 –Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 2021թ փետրվարի (նշանակաման) կարգը հաստատելու մասին>>

N161-ն որոշմամաբ հաստատված կարգի 7-րդ կետի դրույթի,Խորհուրդը պետք է որոշում կայացնի մրցույթ հայտարարելու մասին: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թ մարտի 4-ի N319-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 2021 թ փետրվարի 11-ի << Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգն հաստատելու մասին >> N161-Ն որոշմամաբ հաստատված կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթի պահանջը՝ առաջարկեց օրենքով սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

Արտահայտվեցին. Գևորգ Ստեփանյանը և Միրարփի Պետրոսյանը: Նրանք հավանություն տվեցին կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի խորհրդի նախագահի Ռ.Մանասյանի առաջարկությունը:

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 13-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով դպրոցի կանոնադրության 51-րդ կետի 1-ին ենթակետը, ՀՀ կառավարության 2010 թ մարտի 4-ի << Պետական հանրակրթական ուսումնակյան հաստատության տնօրենի (նշանակման) կարգը հաստատելու մասին>> N319-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 2021թ

Մրցույթի հայտարարություն

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

ՀՀ կառավարության 2010թ մարտի 4-ի N319 –Ն որոշմաբ հաստատված՝ <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և7-րդ կետերի համաձայն՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի

Կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) **ՀՀ քաղաքացիությունը.**
2) **Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)**

2.Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտի պատճենը.

3)Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերն ընդունվում են <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում

2022թ հունիսի 2-ից մինչև հունիսի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00} մինչև ժամը 17^{00}, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ հուլիսի 7-ին ժամը 14^{00}-ին**<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:**

Գեղարքունիքի մարզ գյուղ Ծովասար 1-ին փողոց 17 շենք

(Ուսումնական հաստատության գտնվելու վայրը)

Տեղեկությունների համար դիմել Գևորգ Ստեփանյանին 094 30 90 36, էլ.հասցե gevorg1984@gmail.com

(Խորհրդի կողմից լիազորված անդամի հեռախոսահամարը և էլ. հասցեն):

փետրվարի 11-ի N161-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի, 3-րդ,4-րդ կետերի պահանջները՝ խորհուրդը որոշում է

1.<< Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2022թ հունիսի 2-ից հայտարարել մրցույթ:

2.Մինչև 2022թ հուլիսի 7-ը կազմակերպել և անցկացնել << Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթ:

3.2020թ հունվարի 7-ին<< Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի >> 3-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը տրամադրել կրթության կառավարման պետական լիազորված մարմնին (նախարարությանը):

4.Մրցույթին մասնակցելու մասին հայտերը ընդունել 2022թ հունիսի 2-ից մինչև 2022 թվականի հունիսի 22-ը ներառյալ:

5.Մրցույթը անցկացնել դպրոցի շենքում 2022թ հուլիսի 7-ին ժամը 14^{00} –ին:

6.Հանձնարարել խորհրդի նախագահին նիստի որոշման պատճենը եռօրյա ժամկետում ներկայացնել լիազորված մարմնին:

<< Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ կառավարման խորհրդի

Նախագահ՝ Ռ.Մանասյան

Քարտուղար՝ Վ.Գաբրիելյան

Դպրոցի տնտրենի ժ/պ՝ Ա.Մովսիսյան